«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի 2025 թվականի օգոստոսի 23-ի նիստի № 1 որոշման

քաղվածք

Նախագահ	Արա Մկրտչյան
Փոխնախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Ռուբինա Մխիթարյան
	Թամարա Չախոյան

ՀՖՖ Բողոքարկման կոմիտեն, քննության առնելով ՀՀ քաղաքացի Արարատ Հարությունյանի կողմից 04.07.2025թ.-ին ներկայացված դիմումը՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից 05.05.2018թ.-ին կայացված որոշման դեմ բողոքարկման շրջանակներում ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի կողմից 18.05.2018թ.-ին կայացված որոշման վերանայման պահանջով, որոշեց.՝

1. ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի՝ 18.05.2018թ.-ի նիստի 2-րդ կետով կայացված որոշումը փոփոխել՝ բավարարելով ՀՀ քաղաքացի Արարատ Հարությունյանի բողոքը մասնակիորեն և փոփոխելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի՝ 05.05.2018թ.-ի որոշումը հետևյալ կերպ.
   «Արարատ Հարությունյանին արգելել զբաղվել որևէ ֆուտբոլային գործունեությամբ՝ 7 տարի 3 ամիս 18 օր ժամկետով (պատասխանատվության միջոցի կիրառման սկիզբ՝ 05.05.2018թ., պատասխանատվության միջոցի կիրառման ավարտ՝ 23.08.2025թ.):»
2. Հանձնարարել ՀՖՖ Կարգապահական գրասենյակին՝ ներկայացնել դիմում ՖԻՖԱ Կարգապահական կոմիտե՝ Արարատ Հարությունյանի նկատմամբ կիրառված՝ ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու արգելքի պատժամիջոցի կիրառման համաշխարհային ազդեցությունը դադարեցնելու վերաբերյալ:
3. Բողոքարկման մարմնի որոշումները վերջնական են և ենթակա չեն բողոքարկման:

ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի նախագահ՝

Արա Մկրտչյան